

Գրանցված է  
Լեռնային Ղարաբաղի Հանրապետության  
արդարադատության նախարարության կողմից  
«18» մարտի 2011 թ.  
Պետական գրանցման համարը 3001127

**ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

«16» մարտի 2011թ.

N 7 / 18 -Ն

ք.Ստեփանակերտ

**ՔՎԵԱՏՈՒԹԻ ՁԵՎԸ ԵՎ ՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ  
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ  
2005 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 24-Ի ԹԻՎ 6/87 ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ  
ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ընտրական օրենսգրքի 48-րդ հոդվածի 1-ին մասի 17-րդ կետին և «Իրավական ակտերի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 73-րդ հոդվածին համապատասխան՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովը **որոշում է.**


**(նախաբանը փոփ. 28.01.2015 N 54-Ն)**

1. Հաստատել քվեատուփի ձևը և չափերը՝ համաձայն հավելվածի:
2. Ուժը կորցրած ճանաչել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովի 2005 թվականի մարտի 24-ի «Քվեատուփերի ձևերի մասին» թիվ 6/87 որոշումը:


**ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ  
ՆԱԽԱԳԱՀ՝**

**Ռ. ՊԵՏՐՈՍՅԱՆ**

ՔՎԵԱՏՈՒՓԻ ՁԵՎԸ ԵՎ ՉԱՓԵՐԸ



Քվեատուփի կափարիչի անցքի չափերը  
երկարությունը՝ 90մմ, լայնությունը՝ 15մմ



Քվեատուփի վերին մասի չափերը՝ 390մմ x 390մմ ± 5 մմ  
Քվեատուփի ստորին մասի չափերը՝ 320մմ x 320մմ ± 5 մմ  
Քվեատուփի բարձրությունը՝ 380 մմ ± 5 մմ